Այս չոր չարեաց մասունքս որ կայ Նրբատեսակ անմարմնական․
Լինի նոցա տանջանարան որք չար գործոց հետեւեցան․
Որք աստ վարին, անդ ի յանշէջ հուրն անկանին․
Եւ որք Աստուծոյ սիրոյն․ . . . . .
Շաղախին յաղտ գինային, անքուն որդունք նոցա ծնանին,
Եւ խաւարեալ է աստ հոգին, նոյա խաւարն է արտաքին․
Աստ չորս չարիքս ի միասին, իւրաքանչիւր անձանց լինին․
Որք աստ չարիք մեղօք սխալին, անդ չորս ազգ չար նոցա դիպին․
Բայց թէ վասնէ՞ր անանց տանջին, որք անցաւոր մեղօք սխալին,
Ծի ըստ չափոյ մեղաց տանջին, որք աստ անդարձ կային եւ անրապաւ չարըն կամին,
Անանց տանջանք նոցա տացին, ըստ իրաւանց դատաստանին.
Որք զանազան չարեօք սխալին՝ պէսպէս տանջանք նոցա կազմին.
Զի որքան առատ է նիւթ հրին, այնքան սաստիկ բորբոքեսցին,
Վա՜յ եւ եղուկ է անդ նոցին, զի բարկացաւ Աստուած նոցին․
Այնպէս տանջանք տացէ նոցին զոր ոչ քննէ միտք մարդկային․
Զի զգայարանք նոցա կրկին, յատուկ յատուկ պատմօք տուժին․
'Ի իւրաքանչիւր մասունք մարմնին կրակըծալից մորմոքեսցին․
Եկայք լացցուք ամենեքեան ընդ տանջելոց որ անդ մնան,
Զի չարչարանս որ առացան ոչ խափանի մինչ յաւիտեան.
Այս ողբս եղգոց Նախատեղծին որ դէմ բնութիւնս բարբառին,
Այս զուժ ողբոց միշտ կատարին յանցեալն երկրի եւ ապագին։

Վենետիկի վանք, ձեռագիր թիւ 559, Զ. Գ.

ՃԱՌԱԳԱՅԹԸ

(ՌՈՆՏՕ)

—

Արեւէն փրթած խարտեաշ մազ նրբին,
Օդին մէջ երկայն կ'իյնայ թելն ոսկի,
Լուսեղէն չուիղ ուրկէ Սերովբին
Մարմինը չուշան վար կը սողոսկի՝
Այն պահուն ուր նոր կը ծագի արփին.

Անտառներուն մէջ, ուր յորդ կը թափին
Ըստուերներն, հանգոյն գեղնորակ հասկի՝
Կը կախուի խոտին վերեւն ու թուփին,
Արեւէն փրթած։

Ժայռերը լոռուա ու ծերուկ թմբին
Կը սիրեն զայն՝ երբ, զով, կը ցոլցլկի,
Տածանելով թոյլ, նազոտ, մեղմակի,
Ժպտելով ջուրին, լերան ու ափին
Արեւէն փրթած.

ՓՐՓՈՒՐԸ

(ՌՈՆՏԷԼ)

—

Ես ժանեակն իմ ձիւնագոյն,
Պճնող՝ կատարն ալիքին.
Հառաչանքն եմ կաթնագին՝
Տարփոտ ծովին խաժ հոգւոյն։

Իմ ծոցս իրեն կ'ընտրէ բոյն
Երփներանգ չողն արեգին.
Ես ժանեակն եմ ձիւնագոյն,
Պճնող՝ կատարն ալիքին։

Ոչինչ ինձմէ փափկագոյն.
Ծընունդ հովուն քըմայքին.
Կ'օրօրուիմ պահ մ'հեշտագին
Ու կը ցնդիմ ես իսկոյն.
Ես ժանեակն իմ ձիւնագոյն։

1893

ՊԱՐՈՅՐ

digitised by A.R.A.R.@